Ծաղիկ

Ի՞նչ է ծաղիկը:

Անցյալում ծաղիկը հանդիսացել է համաշխարհային տարածում ունեցող հիվանդություն: Բայց պատվաստումների շնորհիվ՝ այն վերացվել է ամենուր: Այսօր ծաղիկ գոյություն ունի միայն հատուկ լաբորատորիաներում: Սակայն եթե ահաբեկիչները լաբորատորիայից գողանան ծաղիկի վիրուսը, նրանք կկարողանան գործածել դա որպես զենք՝ մեծ թվով մարդկանց լրջորեն հիվանդացնելու նպատակով:

Եթե ծաղիկի վիրուսի արտակարգ իրադրություն ստեղծվի, ապա.

- Հետեւեցեք լուրերին՝ ցուցումների համար:
- Հեռու մնացեք որեւէ անհատից, որ կարող է ծաղիկով վարակված լինել:
- Եթե կարծում եք, որ գտնվել եք ծաղիկի ազդեցության գոտում, ապա հեռու մնացեք այլ մարդկանցից եւ հեռաձայնեցեք Ձեր բժշկին կամ Ձեր շրջանի առողջապահական բաժնին:

Ծաղիկի վարակը արդյո՞ք վտանգավոր է:

Այո: Ծաղիկով վարակված անհատների 10-ից երեքը կարող են մահանալ: Շատերը ծաղիկով հիվանդանալուց հետո մնում են ողջ, սակայն հիվանդությունից հետո ձեռք են բերում վատ սպիներ: Դուք կարող եք դեղորայք ընդունել ամոքելու համար ծաղիկից առաջացած ցավերը եւ կանխելու համար այլ վարակներ, սակայն ծաղիկ հիվանդությունը բուժում չունի: Պատվաստվելը ծաղիկի վարակը կանխելու լավագույն միջոցն է:

Առողջապահության պատասխանատու մարմիններն արդյո՞ք պատրաստ են ծաղիկի վարակի արտակարգ դրությանը:

Այո: Միացյալ Նահանգներում բոլորին պաշտպանելու համար բավարար պատվաստանյութ գոյություն ունի: Առողջապահության ոլորտի որոշ աշխատողներ արդեն պատվաստված են, անցել են ուսուցման հատուկ դասընթացներ եւ պատրաստ են օգնել կանխելու Ձեր շրջանում ծաղիկի վարակի տարածումը:

Արդյո՞ք ծաղիկը վարակիչ է:

Այո: Դուք կարող եք ծաղիկով վարակվել, եթե Դուք.

- մոտ եք գտնվում ծաղիկով վարակված անհատի, հատկապես այն ժամանակ, երբ անհատն ունի ջերմություն, ցան կամ կարմիր կետեր լեզվի վրա եւ բերանի շրջանում կամ
- ձեռք տաք որեւէ մի բանի, որ վարակված է ծաղիկով, ինչպես օրինակ վարտիք, վերմակ կամ հագուստ:

Արդյո՞ք ինձ պետք է պատվաստվել:

Դուք պետք է պատվաստվեք միայն այն դեպքում, երբ ծաղիկի վարակի համաճարակ առաջանա: Եթե ընդհանուր համաճարակ գոյություն չունի, ծաղիկի դեմ պատվաստվելու կարիքը չունեք:

Ի՞նչ անել, եթե կարծում եմ որ եղել եմ ծաղիկի վարակի գոտում:

Անհապաղ հեռաձայնեցեք Ձեր բժշկին կամ հիվանդանոց: Նրանք Ձեզ կասեն թե ինչ պետք է անել: **Եվ**, հեռու մնացեք այլ մարդկանցից, մինչեւ Ձեզ չասվի ինչ անել:

Որո՞նք են ծաղիկի վարակի ախտանշանները:

Ծաղիկով վարակված անհատի հետ շփման մեջ լինելուց 7-17 օրվա ընթացքում Դուք կարող եք ունենալ.

- ջերմություն
- հոգնածություն
- գլխացավեր ու մարմնացավեր
- փսխուք

Ապա, հիվանդ զգալուց 2-4 օր հետո, Դուք կսկսեք ունենալ ցան:

Ինչի՞ է նման ցանը:



Փոքրիկ կարմիր կետեր են սկսում առաջանալ Ձեր բերանում: Արագորեն տարածվում են դեպի երեսը, ապա դեպի բազուկները, սրունքները, ձեռքերը եւ ոտքերը:

Ցանը վերածվում է բշտիկների, որոնք լցվում են թարախով եւ հետո կեղեւապատվում են: Կեղեւները թափվում են 3 շաբաթվա ընթացքում եւ հետքերը վերածվում են սպիների:

Հավելյալ տեղեկությունների համար.

Հեռաձայնեցեք CDC-ին անգլերենով օգնություն ստանալու համար.
800-CDC-INFO (800-232-4636)
888-232-6348 (TTY)

Կամ այցելեցեք ինտերնետ՝
www.cdc.gov/smallpox
www.dhs.ca.gov/epo հասցեներով: